

Մարգարետ Ռ.Աբրահամյանի շնորհավորական ուղերձը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ

31.05.2014

Սիրելի՛ երեխաներ

Ձերմորեն շնորհավորում եմ բոլորիդ այս ուրախ ու պայծառ տոնի կապակցությամբ:Թող ձեր նվիրական իղձերն ու երազանքներն իրականություն դառնան, մանկական անմեղ ու առողջ ժպիտը սեր ու բարություն սփռի շրջապատում:

Անհոգ մանկության ապահովումը գտնվում է պետության հատուկ ուշադրության ներքո:Մենք փորձում են լավագույն պայմաններ ստեղծել մեր երեխաների առողջության պահպանման, կրթության ու դաստիարակության համար, լուծել սոցիալական ապահովվածության և բարեկեցություն խնդիրները: Հունիսի 1-ը ևս մեկ ամիթ է դրսևորելու երեխաների հանդեպ մեր նվիրվածությունն ու հոգածությունը:Մեր ցանկությունն է, որ հայ ընտանիքում մշտապես լսվի մանուկների կարկաչուն ծիծաղը:

Հարգելի՛ հայրենակիցներ,սիրով ու հոգատարությամբ, ընտանեկան ջերմությամբ լցնենք մեր երեխաների մանկությունը, որպեսզի ապագայում նրանք նույնպիսի սիրով ու պատասխանատվությամբ նայեն մարդկանց ու աշխարհին: Կրթված ու զարգացած, բարեպաշտ երեխան ինչպես ծնողի ու ընտանիքի, այնպես էլ պետության պարծանքն է:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ մեր սիրելի փոքրիկներին և մաղթում խաղաղ երկինք, առողջություն, անհոգ մանկություն և լուսավոր ապագա:

Սիրով և հարգանքով՝ Ռուբիկ Աբրահամյան
ՀՀ Արարատի մարզպետ